# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1.3

## ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/22-ՀՆՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **22 հունիսի 2026թ.**

2026թ. հունիսի 22-ին՝ ժամը 11:00-ին, ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 104 հասցեում գտնվող ՀՀ ազգային անվտանգության ծառայության շենքում տեղի ունեցավ հատուկ նպատակային այլ նյութերի ձեռքբերման թիվ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/22-ՀՆՆ ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Վ. Ֆարսյանը՝ | ՀՀ ԱԱԾ ՏնտՎ պետը, |
| Դ. Սարգսյանը՝ | ՀՀ ԱԱԾ ՏնտՎ աշխատակիցը, |
| Ս. Մխիթարյանը՝ | ՀՀ ԱԱԾ ՏնտՎ աշխատակիցը: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Վ. Ֆարսյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Վ. Վարդանյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, ինչով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Ընթացակարգի շրջանակում ներկայացված հարցման և տրամադրված պարզաբանման մասին:
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

## 1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՐՑՄԱՆ և ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով Ընթացակարգի շրջանակում ստացված

հարցման բովանդակության վերաբերյալ տեղեկատվություն, մասանորապես, տեղեկացվեց, որ 20.06.2026թ-ին ժամը 14:29:21-ին Մասնակցի կողմից ստացվել է հարցում (կցվում է) հետևյալ բովանդակությամբ՝ «Հարգելի գործընկեր, N 53, 54 և 80 չափաբաժինների նախահաշվարկային գինը չի համապատասխանում ներկայիս շուկայական գներին, եթե հնարավոր է վերանայեք 53, 54 և 80 չափաբաժինների գները:»:

22.06.2026թ-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Պատասխանել հարցում ներկայացրած Մասնակցին հետևյալ բովանդակությամբ՝ «Հարգելի մասնակից, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պարզաբանում չի տրամադրվում, քանի որ հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:»:

2. Հաստատել հրավերի պարզաբանման մասին հայտարարության տեքստը, համաձայն սույն արձանագրությանը կից Հավելված 1-ի:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ, ԺԱՄԸ ԵՎ ՎԱՅՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

22.06.2026թ-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը նշանակել համապատասխանաբար Ընթացակարգի հրավերով և հայտարարությամբ սահմանված օրը և ժամին՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 104 հասցեում գտնվող ՀՀ ազգային անվտանգության ծառայության շենքում:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Վ. Ֆարսյան ____________

*Հանձնաժողովի անդամ՝*

Դ. Սարգսյան ____________

Ս. Մխիթարյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Վարդանյան ____________